



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«03» դեկտեմբերի 2024 թվականի N 1458-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացիներ Յուրա Սլավիկի Ղազախյանի (ծնված՝ 1984 թվականի ապրիլի 12-ին), Սլավիկ Սերյոժայի Ղազախյանի (ծնված՝ 1960 թվականի հուլիսի 22-ին), Կարինե Սլավիկի Ղազախյանի (ծնված՝ 1982 թվականի սեպտեմբերի 5-ին), Ռիտա Սեդրակի Ալաբերդյանի (ծնված՝ 1959 թվականի նոյեմբերի 14-ին) Ջրվեժի համայնքապետարանին հասցեագրված դիմումը, որով ցանկություն են հայտնել օրինականացնել ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող Կոտայքի մարզի Ջրվեժ գյուղի 6-րդ փողոց 2 փակուղի թիվ 11 հասցեի բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 721245 վկայական, տրված 2001 թվականի ապրիլի 5-ին, անվան, հայրանվան, ազգանվան փոխման վկայական թիվ 010944 տրված է՝ 2015 թվականի մարտի 18-ին «ԳԵՈԳԼՈԲԱԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2023 թվականի դեկտեմբերի 27-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը, ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող ծածկագիր՝ 2023KJWRMW, մուտքագրված 2023 թվականի դեկտեմբերի 27-ին):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «ԳԵՈԳԼՈԲԱԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Յուրա Սլավիկի Ղազախյանին, Սլավիկ Սերյոժայի Ղազախյանին, Կարինե Սլավիկի Ղազախյանին, Ռիտա Սեդրակի Ալաբերդյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Ջրվեժ գյուղի 6-րդ փողոց 2-րդ փակուղի թիվ 11 հասցեի բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում 2009 թվականին ինքնակամ կառուցվել է թիվ 1 բնակելի տունը՝ ընդհանուր 37 քառ.մետր, թիվ 2 ծածկ 3,2 քառ.մետր և թիվ 3 պարիսպը՝ 4,45 քառ.մետր արտաքին մակերեսներով, ինչպես նաև առկա են՝ ինքնակամ բացված թվով երեք պատուհաններ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8.1, 10, 11, 13 և 18-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Յուրա Սլավիկի Ղազախյանին, Սլավիկ Սերյոժայի Ղազախյանին, Կարինե Սլավիկի Ղազախյանին, Ռիտա Սեդրակի Ղազախյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Ջրվեժ գյուղի 6-րդ փողոց 2-րդ փակուղի թիվ 11 հասցեի բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված շինությունների, ինքնակամ բացված պատուհանների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, ինքնակամ շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերմիտուտ պահանջելու իրավունք, **որոշում են.**

1. Յուրա Սլավիկի Ղազախյանին, Սլավիկ Սերյոժայի Ղազախյանին, Կարինե Սլավիկի Ղազախյանին, Ռիտա Սեդրակի Ալաբերդյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 6-րդ փողոցի 2-րդ փակուղի թիվ 11 հասցեի բնակավայրի

բնակելի կառուցապատման հողամասում 2009 թվականին ինքնակամ կառուցված թիվ 1 բնակելի տունը՝ ընդհանուր 37 քառ.մետր, թիվ 2 ծածկ 3,2 քառ.մետր և թիվ 3 պարիսպը՝ 4,45 քառ.մետր արտաքին մակերեսներով, ինչպես նաև ինքնակամ բացված թվով երեք պատուհանները, համարել օրինական:

2.Սահմանել, որ հողամասի սեփականատերերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Զրվեժ համայնքի բյուջեի N 900105228218 հաշվին պետք է վճարեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 121 508 (մեկ հարյուր քսանմեկ հազար հինգ հարյուր ութ) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը:

2)իրենց միջոցների հաշվին պետք է վճարեն կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը համայնքի ղեկավարի տեղակալ Արմեն Մկրտչյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Արմինե Պետրոսյանը:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Յուրա Սլավիկի Ղազախյանին, Սլավիկ Սերյոժայի Ղազախյանին, Կարինե Սլավիկի Ղազախյանին, Ռիտա Սեդրակի Ալաբերքյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2024 թ. դեկտեմբերի 3
գ. Զրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«03» դեկտեմբերի 2024 թվականի N 1459-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացիներ Արմեն Սարգսի Չարխչյանի (ծնված՝ 1971 թվականի մարտի 27-ին) և Անահիտ Վալերիի Մնացականյանի (ծնված՝ 1971 թվականի փետրվարի 09-ին) Զրվեժի համայնքապետարանին հասցեագրված դիմումը, որով ցանկություն են հայտնել օրինականացնել ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող Կոտայքի մարզի Զրվեժի այգեգործական զանգվածի թիվ 13 հասցեի բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2812617 վկայական, տրված 2011 թվականի ապրիլի 04-ին, անհատ ձեռնարկատեր Հայկ Ալեքսանի Ավագյանի կողմից 2024 թվականի հուլիսի 18-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը, ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող ծածկագիր՝ 2024M2F62H, մուտքագրված 2024 թվականի հուլիսի 18-ին):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և անհատ ձեռնարկատեր Հայկ Ալեքսանի Ավագյանի կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Արմեն Սարգսի Չարխչյանին և Անահիտ Վալերիի Մնացականյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Զրվեժի այգեգործական զանգվածի թիվ 13 հասցեի բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում 2012 թվականին ինքնակամ կառուցվել է թիվ 1 այգետնակը՝ ընդհանուր 340,05 քառ.մետր և թիվ 2, 3 պարիսպները՝ ընդհանուր 7,59 քառ.մետր արտաքին մակերեսներով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ և 62-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 4-րդ կետի, նույն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Արմեն Սարգսի Չարխչյանին և Անահիտ Վալերիի Մնացականյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Զրվեժի այգեգործական զանգվածի թիվ 13 հասցեի բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, ինքնակամ շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերմիտուտ պահանջելու իրավունք, **որոշում են.**

1.Արմեն Սարգսի Չարխչյանին և Անահիտ Վալերիի Մնացականյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Զրվեժի այգեգործական զանգվածի թիվ 13 հասցեի գույքը վերահասցեավորել՝ համայնք Զրվեժ, գյուղ Զրվեժ, Վան այգեգործական թաղամաս, թիվ 13:

2.Արմեն Սարգսի Չարխչյանին և Անահիտ Վալերիի Մնացականյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի Վան այգեգործական թաղամասի թիվ 13 հասցեի բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում 2012

թվականին ինքնական կառուցված թիվ 1 այգետնակը՝ ընդհանուր 340,05 քառ.մետր և թիվ 2, 3 պարիսպները՝ ընդհանուր 7,59 քառ.մետր արտաքին մակերեսներով, համարել օրինական:

3.Սահմանել, որ հողամասի սեփականատերերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105228218 հաշվին պետք է վճարեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 939 047 (ինը հարյուր երեսունինը հազար քառասունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իրենց միջոցների հաշվին պետք է վճարեն կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

4.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում նշված ինքնական կառույցները ենթակա չեն պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

5.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

6.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Արմինե Պետրոսյանը:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Արմեն Սարգսի Չարխչյանին և Անահիտ Վալերիի Մնացականյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2024 թ. դեկտեմբերի 3
գ. Ջրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«03» դեկտեմբերի 2024 թվականի N 1460-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացիներ Մնացական Գևորգի Մարգարյանի (ծնված՝ 1959 թվականի սեպտեմբերի 20-ին), Սիրանուշ Արամայիսի Բաղդասարյանի (ծնված՝ 1961 թվականի փետրվարի 16-ին), Արսեն Մնացականի Մարգարյանի (ծնված՝ 1985 թվականի մայիսի 12-ին), Թամար Մնացականի Մարգարյանի (ծնված՝ 1982 թվականի օգոստոսի 28-ին) և Լիլիթ Մնացականի Մարգարյանի (ծնված՝ 1991 թվականի հունվարի 21-ին) Ջրվեժի համայնքապետարանին հասցեագրված դիմումը, որով ցանկություն են հայտնել ճանաչել ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի՝ 07-042-0006-0001 կադաստրային ծածկագրով բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի՝ Մնացական Գևորգի Մարգարյանի, Սիրանուշ Արամայիսի Բաղդասարյանի, Արսեն, Թամար և Լիլիթ Մնացականի Մարգարյանների կողմից փաստացի օգտագործվող 2280,0 քառ.մետր մակերեսով հողակտորի նկատմամբ և օրինականացնելու ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0006-0001 կադաստրային ծածկագրով բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ «Հայաստանի Ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպության Աբովյանի տարածքային ներկայացուցչության կողմից 2024 թվականի փետրվարի 14-ին տրված թիվ Աբ-25/1 արխիվային տեղեկանքը, «Մալխասյանց փաստաբանական կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2024 թվականի օգոստոսի 28-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը, ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող ծածկագիր՝ 2024UCGTRZ, մուտքագրված 2024 թվականի օգոստոսի 28-ին):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «Մալխասյանց փաստաբանական կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Մնացական Գևորգի Մարգարյանին, Սիրանուշ Արամայիսի Բաղդասարյանին, Արսեն, Թամար և Լիլիթ Մնացականի Մարգարյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0006-0001 կադաստրային ծածկագրով բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի փաստացի օգտագործվող հողամասի մակերեսը կազմում է 2280,0 քառ.մետր՝ փաստաթղթերում ամրագրված 1900,0 քառ.մետր մակերեսի փոխարեն և նշված հողակտորում 1986-1990 թվականներին ինքնակամ կառուցվել է թիվ 1 բնակելի տունը՝ ընդհանուր 365,68 քառ.մետր և թիվ 2 պարիսպը՝ 19,40 քառ.մետր արտաքին մակերեսներով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ և 53-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 4-րդ կետի, նույն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 22.1-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Մնացական Գևորգի Մարգարյանին, Սիրանուշ Արամայիսի Բաղդասարյանին, Արսեն, Թամար և Լիլիթ Մնացականի Մարգարյաններին ընդհանուր համատեղ սեփականության

իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0006-0001 կադաստրային ծածկագրով բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, ինքնակամ շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1.Ճանաչել Մնացական Գևորգի Մարգարյանին, Սիրանուշ Արամայիսի Բաղդասարյանին, Արսեն, Թամար և Լիլիթ Մնացականի Մարգարյանների ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը ըստ կադաստրային քարտեզագրման արդյունքների Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0006-0001 կադաստրային ծածկագրով բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի՝ փաստացի օգտագործվող 2280,0 քառ.մետր մակերեսով հողակտորի նկատմամբ, որն իր կողմից փաստացի օգտագործվել է նաև մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:

2.Մնացական Գևորգի Մարգարյանին, Սիրանուշ Արամայիսի Բաղդասարյանին, Արսեն, Թամար և Լիլիթ Մնացականի Մարգարյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0006-0001 կադաստրային ծածկագրով բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, Հատիսի փողոց, թիվ 28:

3.Մնացական Գևորգի Մարգարյանին, Սիրանուշ Արամայիսի Բաղդասարյանին, Արսեն, Թամար և Լիլիթ Մնացականի Մարգարյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Հատիսի փողոցի թիվ 28 հասցեի բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում 1986-1990 թվականներին ինքնակամ կառուցված թիվ 1 բնակելի տունը՝ ընդհանուր 365,68 քառ.մետր և թիվ 2 պարիսպը՝ 19,40 քառ.մետր արտաքին մակերեսներով համարել օրինական:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա::

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Արմինե Պետրոսյանը:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Մնացական Գևորգի Մարգարյանին, Սիրանուշ Արամայիսի Բաղդասարյանին, Արսեն, Թամար և Լիլիթ Մնացականի Մարգարյաններին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՒՎԱՐ՝



ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2024 թ. դեկտեմբերի 3

գ. Ջրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«03» դեկտեմբերի 2024 թվականի N 1461-Ա

ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԶՐՎԵԺ ԳՅՈՒՂԻ 1-ԻՆ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 3/19 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԶԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի Մելքոնյան փողոցի 2-րդ փակուղու թիվ 13 հասցեի տան բնակիչ Ռաֆիկ Սիմոնի Վարդանյանի (ծնված՝ 1963 թվականի հուլիսի 31-ին) կողմից Ջրվեժի համայնքապետարանին հասցեագրված դիմումը՝ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 1-ին թաղամասի թիվ 3/19 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող հողակտորում ինքնակամ կառուցված և համայնքային սեփականության իրավունքը ճանաչված թիվ 1՝ 73,37 քառ.մետր և թիվ 2՝ 145,16 քառ.մետր, ընդամենը՝ 218,53 քառ.մետր մակերեսով ծածկերի և դրանցով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության արդյունաբերական օբյեկտների 406,2 քառ.մետր մակերեսով հողակտորի վարձակալության պայմանագիրը լուծելու և նշված գույքն ուղղակի վաճառքի ձևով իրեն օտարելու խնդրանքով (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 18092014-07-0027, հաստատված 2014 թվականի սեպտեմբերի 18-ին):

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, 466-րդ հոդվածի առաջին մասի, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով, հիմք ընդունելով Ջրվեժ համայնքի ավագանու 2024 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 115-Ա որոշումը և հաշվի առնելով Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի Մելքոնյան փողոցի 2-րդ փակուղու թիվ 13 հասցեի տան բնակիչ Ռաֆիկ Սիմոնի Վարդանյանի խնդրանքը, **որոշում եմ.**

1.Կողմերի համաձայնությամբ լուծել համայնքի ղեկավար Ռոբերտ Վիգենի Պետրոսյանի և քաղաքացի Ռաֆիկ Սիմոնի Վարդանյանի միջև 2014 թվականի սեպտեմբերի 12-ին կնքված անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը՝ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 1-ին թաղամասի թիվ 3/19 հասցեում գտնվող գույքի նկատմամբ:

2.Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 1-ին թաղամասի թիվ 3/19 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող հողակտորում ինքնակամ կառուցված և համայնքային սեփականության իրավունքը ճանաչված թիվ 1՝ 73,37 քառ.մետր և թիվ 2՝ 145,16 քառ.մետր, ընդամենը՝ 218,53 քառ.մետր մակերեսով ծածկերը և դրանցով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության արդյունաբերական օբյեկտների 406,2 քառ.մետր մակերեսով հողակտորը՝ գնման նախապատվություն իրավունքով ուղղակի վաճառքի ձևով օտարել կառույցն իրականացրած Ռաֆիկ Սիմոնի Վարդանյանին:

3.Սահմանել, որ Ռաֆիկ Սիմոնի Վարդանյանը սույն որոշման ընդունումից հետո, 10-օրյա ժամկետում պետք է վճարի հողամասի կադաստրային արժեքը, որը կազմում է 4 270 706 (չորս միլիոն երկու հարյուր յոթանասուն հազար յոթ հարյուր վեց) Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ թիվ 1՝ 73,37 քառ.մետր և թիվ 2՝ 145,16 քառ.մետր, ընդամենը՝ 218,53 քառ.մետր մակերեսով ծածկերի վաճառքի

գ. Զրպեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«03» դեկտեմբերի 2024 թվականի N 1462-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Ռաֆիկ Գերասիմի Հակոբյանի (ծնված՝ 1952 թվականի հունիսի 05-ին) Զրվեժի համայնքապետարանին հասցեագրված դիմումը, որով ցանկություն է հայտնել ճանաչել իր սեփականության իրավունքը Զրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոց թիվ 152 հասցեի՝ իր կողմից փաստացի օգտագործվող 1440,0 քառ.մետր մակերեսով տնամերձ հողակտորի նկատմամբ (հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր, վավերացված 2024 թվականի հոկտեմբերի 29-ին, անհատ ձեռնարկատեր Վալերիկ Գալստյանի կողմից 2024 թվականի հոկտեմբերի 30-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և անհատ ձեռնարկատեր Վալերիկ Գալստյանի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Զրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոց թիվ 152 հասցեում գտնվող Ռաֆիկ Գերասիմի Հակոբյանի կողմից փաստացի օգտագործվող տնամերձ հողամասի չափը կազմում է 1440,0 քառ.մետր՝ փաստաթղթերում ամրագրված 1200,0 քառ.մետրի փոխարեն:

Ղեկավարվելով «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի պահանջով և նկատի ունենալով այն հանգամանքը, որ Ռաֆիկ Գերասիմի Հակոբյանին հատկացված հողամասից կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվառված ավել օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, ընդգրկված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ընդգրկված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության, ինչպես նաև հնագիտական պատմամշակութային հողերի պահպանման գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի առաջացնում սերվիտուտ, **որոշում են**.

1. Ճանաչել Ռաֆիկ Գերասիմի Հակոբյանի սեփականության իրավունքն ըստ կադաստրային քարտեզագրման արդյունքների Զրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոց թիվ 152 հասցեի՝ փաստացի օգտագործվող 1440,0 քառ.մետր մակերեսով տնամերձ հողամասի նկատմամբ, որը նրա կողմից փաստացի օգտագործվել է նաև մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:

2. Հողամասի սահմանները որոշվում են Զրվեժ համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Հայկ Վարդանյանի վրա:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Արմինե Պետրոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2024 թ. դեկտեմբերի 3
գ. Զրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«04» դեկտեմբերի 2024 թվականի N 1463-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի ԹԻՎ 1253-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 34-րդ հոդվածի 1-ին մասերով, **որոշում եմ.**

1. Համայնքի ղեկավարի 2024 թվականի հոկտեմբերի 3-ի «Անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին» թիվ 1253-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) որոշման առաջին կետում «թիվ 1 առանձնացվող հատվածին տրամադրել հասցե՝ համայնք Զրվեժ, գյուղ Ձորաղբյուր, Բարեկամության փողոց, թիվ 1, թիվ 2 առանձնացվող հատվածին՝ 1006,0 քառ.մետր մակերեսով, տրամադրել հասցե՝ համայնք Զրվեժ, գյուղ Ձորաղբյուր, Բարեկամության փողոց, թիվ 1/1:» բառերը փոխարինել «թիվ 1 առանձնացվող հատվածին տրամադրել հասցե՝ համայնք Զրվեժ, գյուղ Ձորաղբյուր, Բարեկամության փողոց, 2-րդ նրբանցք, թիվ 1, թիվ 2 առանձնացվող հատվածին՝ 1006,0 քառ.մետր մակերեսով, տրամադրել հասցե՝ համայնք Զրվեժ, գյուղ Ձորաղբյուր, Բարեկամության փողոց, 2-րդ նրբանցք, թիվ 1/1:»:

2. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Արմինե Պետրոսյանը:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում՝ Գայանե Անդրանիկի Խաչիկյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2024 թ. դեկտեմբերի 4

գ. Զրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«04» դեկտեմբերի 2024 թվականի N 1464-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ և 53-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով քաղաքացի Արմինե Էդուարդի Հայրապետյանի խնդրանքը, **որոշում եմ**.

1. Արմինե Էդուարդի Հայրապետյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Նորավան թաղամաս թիվ 1, 3 հասցեի բնակավայրերի խառը կառուցապատման հողակտորից բաժանված 471,0 քառ.մետր մակերեսով թիվ 1 առանձնացվող հատվածին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, Նորավան թաղամաս, թիվ 3, թիվ 2 առանձնացվող հատվածին՝ 472,0 քառ.մետր մակերեսով, տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, Նորավան թաղամաս, թիվ 1:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում՝ Արմինե Էդուարդի Հայրապետյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2024 թ. դեկտեմբերի 4
գ. Ջրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«04» դեկտեմբերի 2024 թվականի N 1465-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացիներ Գուրգեն Հովհաննեսի Վանեցյանի (ծնված՝ 1984 թվականի հունվարի 05-ին), Էլմիրա Հովհաննեսի Վանեցյանի (ծնված՝ 1982 թվականի օգոստոսի 06-ին), Անուշ Հովհաննեսի Կարապետյանի (ծնված՝ 1977 թվականի հոկտեմբերի 14-ին) և Երանուհի Կամսարի Գրիգորյանի (ծնված՝ 1956 թվականի օգոստոսի 03-ին) դիմումը, որով ցանկություն են հայտնել օրինականացնելու ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով իրենց պատկանող Աբովյանի շրջանի Ձորաղբյուրի այգետարածքի թիվ 2 տեղամասի թիվ 8 հասցեի բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրեր, վավերացված 2017 թվականի դեկտեմբերի 27-ին, «Ավքոմ քոնսալթ գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2023 թվականի դեկտեմբերի 06-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը, ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող ծածկագիր՝ 2024YUWVRV, մուտքագրված 2024 թվականի նոյեմբերի 20-ին):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «Ավքոմ քոնսալթ գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Գուրգեն, Էլմիրա Հովհաննեսի Վանեցյաններին, Անուշ Հովհաննեսի Կարապետյանին և Երանուհի Կամսարի Գրիգորյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Աբովյանի շրջանի Ձորաղբյուրի այգետարածքի թիվ 2 տեղամասի թիվ 8 հասցեի բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում 1989 ինքնակամ կառուցվել է թիվ 1 բնակելի տունը՝ ընդհանուր 256,7 քառ. մետր, թիվ 3 լողավազանը՝ 13.8 քառ.մետր, թիվ 4 աստիճանավանդակը՝ 1.8 քառ.մետր, թիվ 5 պարիսպը՝ 10.3 քառ.մետր և թիվ 6 հենապատը՝ 2.4 քառ.մետր արտաքին մակերեսներով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ և 53-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 4-րդ կետի, նույն որոշմամբ հաստատված կարգի 10, 11 և 22.1-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Գուրգեն, Էլմիրա Հովհաննեսի Վանեցյաններին, Անուշ Հովհաննեսի Կարապետյանին և Երանուհի Կամսարի Գրիգորյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Աբովյանի շրջանի Ձորաղբյուրի այգետարածքի թիվ 2 տեղամասի թիվ 8 հասցեի բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, ինքնակամ շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում են.**

1. Գուրգեն, Էլմիրա Հովհաննեսի Վանեցյաններին, Անուշ Հովհաննեսի Կարապետյանին և Երանուհի Կամսարի Գրիգորյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Աբովյանի շրջանի Ձորաղբյուրի այգետարածքի թիվ 2 տեղամասի թիվ 8 հասցեի բնակավայրի բնակելի

կառուցապատման հողամասին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, 89-րդ թաղամաս, թիվ 35:

2.Գուրգեն, Էլմիրա Հովհաննեսի Վանեցյաններին, Անուշ Հովհաննեսի Կարապետյանին և Երանուհի Կամսարի Գրիգորյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 89-րդ թաղամասի թիվ 35 հասցեի բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում 1989 թվականին ինքնակամ կառուցված թիվ 1 բնակելի տունը՝ ընդհանուր 256,7 քառ. մետր, թիվ 3 լողավազանը՝ 13.8 քառ.մետր, թիվ 4 աստիճանավանդակը՝ 1.8 քառ.մետր, թիվ 5 պարիսպը՝ 10.3 քառ.մետր և թիվ 6 հենապատը՝ 2.4 քառ.մետր արտաքին մակերեսներով, համարել օրինական:

3.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի առաջատար մասնագետ Տաթևիկ Խաչատրյանի վրա:

4.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Արմինե Պետրոսյանը:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Գուրգեն, Էլմիրա Հովհաննեսի Վանեցյաններին, Անուշ Հովհաննեսի Կարապետյանին և Երանուհի Կամսարի Գրիգորյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2024 թ. դեկտեմբերի 4
գ. Ջրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«04» դեկտեմբերի 2024 թվականի N 1466-Ա

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 12-րդ կետի պահանջով, **որոշում եմ.**

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Գևորգ Գալոյանին տեղադրել արտաքին գովազդի Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի 5-րդ թաղամաս, թիվ 2-1/1 հասցեում՝ 0.8 քառակուսի մետր մակերեսով:

2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնին՝ հաստատված թույլտվությունները հայտատուին տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում տնտեսվարող սուբյեկտին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2024 թ. դեկտեմբերի 4
գ. Զրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«05» դեկտեմբերի 2024 թվականի N 1467-Ա

ԶԱՐՈՒՀԻ ՍԱՄՎԵԼԻ ԱՄԱՏՈՒՆՈՒ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զրվեժ համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Զարուհի Սամվելի Ամատունին հանդիսանալով անշարժ գույքի հարկ վճարող սուբյեկտ, Հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել Զրվեժ համայնքի բյուջեի հանդեպ հարկերը վճարելու պարտավորությունը, ինչի կապակցությամբ 2024 թվականի սեպտեմբերի 25-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով և 34-րդ հոդվածով Զրվեժի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել էր վարչական վարույթ՝ անշարժ գույքի հարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի կողմից 2024 թվականի դեկտեմբերի 4-ին տրված թիվ 743786737434121634, 243786704613121723 և անշարժ գույքի հարկի պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքների՝ Զարուհի Ամատունին Զրվեժ համայնքի բյուջեի հանդեպ մարել է Ձորաղբյուր գյուղում գտնվող անշարժ գույքի 2019-2023 թվականների հարկային պարտավորությունները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի երկրորդ մասի «ա» կետի համաձայն՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կարող է կարճվել, եթե անձը, ում հասցեագրված է լինելու վարչական ակտը, վերացրել է օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումները կամ պատշաճ միջոցներ է ձեռնարկել խախտումները կանխելու ուղղությամբ և նման դեպքերում օրենքն այդ խախտումների վերաբերյալ չի պահանջում վարչական ակտի ընդունում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի երկրորդ մասի «ա» կետով, 53-րդ, 58-60-րդ հոդվածներով, **որոշում եմ.**

1.Քաղաքացի Զարուհի Սամվելի Ամատունու նկատմամբ 2024 թվականի սեպտեմբերի 25-ին հարուցված վարչական վարույթը կարճել:

2.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Զրվեժ համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

3.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է աշխատակազմի քարտուղար Արմինե Պետրոսյանը:

4.Որոշման մեկ օրինակը ներկայացվում է Զարուհի Սամվելի Ամատունուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2024 թ. դեկտեմբերի 5
գ. Զրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«05» դեկտեմբերի 2024 թվականի N 1468-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Ռուզաննա Ռոբերտի Հյուսյանի (ծնված՝ 1962 թվականի հուլիսի 01-ին) Ջրվեժի համայնքապետարանին հասցեագրված դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 6-րդ թաղամասի թիվ 27 հասցեի բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 14112024-07-0004 վկայական, տրված 2024 թվականի նոյեմբերի 14-ին, անհատ ձեռնարկատեր Մարգարիտ Նիտալյանի կողմից 2024 թվականի հոկտեմբերի 16-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և անհատ ձեռնարկատեր Մարգարիտ Նիտալյանի կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Ռուզաննա Ռոբերտի Հյուսյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 6-րդ թաղամասի թիվ 27 հասցեի բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում 2012 թվականին ինքնակամ կառուցվել է թիվ 1 բնակելի տունը՝ ընդհանուր 561,2 քառ.մետր, թիվ 2 ավտոտնակը՝ 75,5 քառ.մետր, թիվ 3 պահակակետը՝ 15,3 քառ.մետր, թիվ 4 օժանդակ շինությունը և լողավազանը՝ ընդհանուր 308,9 քառ.մետր, թիվ 5 ծածկը՝ 20,6 քառ.մետր և թիվ 6 պարիսպը՝ ընդհանուր 13,54 քառ.մետր արտաքին մակերեսներով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ և 62-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 4-րդ կետի, նույն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Ռուզաննա Ռոբերտի Հյուսյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 6-րդ թաղամասի թիվ 27 հասցեի բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, ինքնակամ շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Ռուզաննա Ռոբերտի Հյուսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 6-րդ թաղամասի թիվ 27 հասցեի գույքը վերահասցեավորել՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, 1-ին այգեգործական զանգված, 6-րդ թաղամաս, թիվ 27:

2. Ռուզաննա Ռոբերտի Հյուսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 1-ին այգեգործական զանգվածի 6-րդ թաղամասի թիվ 27 հասցեի բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում 2012 թվականին ինքնակամ կառուցված թիվ 1 բնակելի տունը՝ ընդհանուր 561,2 քառ.մետր, թիվ 2 ավտոտնակը՝ 75,5 քառ.մետր, թիվ 3 պահակակետը՝ 15,3 քառ.մետր, թիվ 4 օժանդակ շինությունը և լողավազանը՝ ընդհանուր 308,9 քառ.մետր, թիվ 5 ծածկը՝ 20,6 քառ.մետր և թիվ 6 պարիսպը՝ ընդհանուր 13,54 քառ.մետր արտաքին մակերեսներով, համարել օրինական:

3. Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105228218 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 2 238 599 (երկու միլիոն երկու հարյուր

երեսունութ հազար հինգ հարյուր իննսունինը) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2) իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

4. Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում նշված ինքնական կառույցները ենթակա չեն պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի առաջատար մասնագետ Տաթևիկ Խաչատրյանի վրա:

6. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Արմինե Պետրոսյանը:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Ռուզաննա Ռոբերտի Հյուսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2024 թ. դեկտեմբերի 5
գ. Ջրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մեյքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«05» դեկտեմբերի 2024 թվականի N 1469-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմանը հաստատված կարգի 50-րդ և 53-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով քաղաքացի Արտակ Հմայակի Մարգարյանի խնդրանքը, **որոշում եմ**.

1. Արտակ Հմայակի Մարգարյանին սեփականության իրավունքով պատկանող մարզ Կոտայք, համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, 4-րդ փողոց, թիվ 19/1 հասցեի՝ 603,3 քառ.մետր մակերեսով (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 21032023-07-0066) և մարզ Կոտայք, համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, 4-րդ փողոց, թիվ 17/2 հասցեի՝ 192,0 քառ.մետր մակերեսով (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 24052024-07-0045) բնակավայրերի բնակելի կառուցապատման հողակտորները միավորել և միավորված անշարժ գույքին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, 4-րդ փողոց, թիվ 19/1:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում՝ Արտակ Հմայակի Մարգարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՆՈՐԱՅՐ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2024 թ. դեկտեմբերի 5
գ. Ջրվեժ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«06» դեկտեմբերի 2024 թվականի N 1470-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ
ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԶՐՎԵժ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ
12-Ի N 458-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

